



with funding from
Austrian
 Development Cooperation



“ԿԼԻՄԱՅԻ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՐԹԱԿ II” ԾՐԱԳԻՐ՝

**ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
 ՀԱՐՄԱՐՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆ
 ԲԱՍԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՐ**



**“ԱԶԳԱՅԻՆ ՋՐԱՅԻՆ
 ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ” ԳԻՏԱԿԱՆ, ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԿ**

ԵՐԵՎԱՆ- 2016

Հեղինակներ և խորհրդատուներ

Լուսինե Վարդանյան – նախագծի ղեկավար, Ազգային ջրային համագործակցություն ՀԿ-ի խորհրդի անդամ

Զարուհի Խաչատրյան – նախագծի սոցիոլոգ, Ազգային ջրային համագործակցություն ՀԿ-ի խորհրդի անդամ

Գևորգ Պետրոսյան – տեղական մակարդակով խորհրդատու, “Բիտսֆիա” ՀԿ-ի նախագահ, Գյումրիի Օրհուս կենտրոնի համակարգող

Գագիկ Ամիրյան – “Հայկական Կարմիր Խաչ”-ի ընկերության Լոռու մարզի մասնաճյուղի կլիմայի փոփոխության ադապտացիոն կենտրոնի փորձագետ

Հեղինակները շնորհակալություն են հայտնում

Համլետ Պետրոսյանին – Բասեն համայնքի գյուղապետ, ծրագրին աջակցելու համար

Գայանե Պետրոսյանին – տեղական մակարդակով փորձագետ

Աննա Շահմուրադյանին – հասարակության հետ կապերի փորձագետ, համայնքային հանդիպումները բարձր մակարդակով կազմակերպելու համար

Արմինե Հովհաննիսյանին – այս փաստաթղթի համակարգչային ձևավորման համար

Սույն փաստաթուղթը մշակվել է «Ազգային ջրային համագործակցություն» ՀԿ կողմից «Տեղական մակարդակում Կլիմայի փոփոխության հարմարվողականության գործողությունների պլանի մշակում» նախագծի շրջանակներում Ավստրիական Կարմիր խաչի ընկերության ֆինանսական աջակցությամբ «Կլիմայի արևելյան հարթակ II» ծրագրի շրջանակներում:


Սույն փաստաթղթի ոչ մի մաս չի կարող օգտագործվել կոմերցիոն նպատակով: Նյութը արտատպելիս հղումը աղբյուրին պարտադիր է: «Ազգային ջրային համագործակցություն» ՀԿ-ն, Հայկական Կարմիր խաչի ընկերությունը և «Կլիմայի արևելյան հարթակ»-ը երախտապարտ կլինեն փաստաթղթի օգտագործման նպատակով հղումներ տրամադրելու համար: Կոմերցիոն նպատակով փաստաթուղթը օգտագործելու համար կարող եք դիմել cwp.armenia@gmail.com, arcs-dp@redcross.am կամ cfe@redcross.at էլ. հասցեներով:

Հայաստանում Ծրագիրը իրականացնում է Հայկական Կարմիր խաչի ընկերությունը: Ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական Միության կողմից: Լրացուցիչ ֆինանսավորումը տրամադրվել է Ավստրիական զարգացման գործակալության և Ավստրիական Կարմիր խաչի ընկերության կողմից:

Հրատարակության բովանդակությունը ԱՁՀ ՀԿ-ի բացառիկ պատասխանատվության ներքո է և որևէ կերպ չի արտահայտում Եվրոպական Միության տեսակետները:

1. Բասեն համայնքի ընդհանուր նկարագիրը

Բասեն համայնքը գտնվում է ՀՀ Շիրակի մարզի Ախուրյանի տարածաշրջանում: Համայնքը տեղակայված է Փամբակի լեռնաշղթայի փեշերին, ծովի մակարդակից 1650 մ բարձրության վրա, Շիրակի գոգավորության հարթավայրային մասում, լեռնատափաստանային գոտում:



Նկար 1. Բասեն համայնքի տեղադիրքը մարզում

2015 թվականի հունվարի 1-ի դրությամբ համայնքի բնակչությունը կազմում է 1775 մարդ¹՝ 459 տնային տնտեսություն: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, թռչնաբուծությամբ, կարտոֆիլի, կտավատի, հացահատիկային, կերային, բանջարաբուստանային մշակաբույսերի մշակությամբ, մեղվապահությամբ:

Համայնքն ունի գործող մանկապարտեզ, դպրոց և երկհարկանի մշակույթի տան շինություն, որը ներկայումս վթարային վիճակում է:

¹ Ըստ Բասենի համայնքապետարանի կողմից ազգային վիճակագրական ծառայությանը տրամադրած տվյալների



Նկար 2. Բասեն գյուղի համայնապատկերը

Համայնքի բնակլիմայական պայմանները

Բասեն համայնքի տարածքը գտնվում է Շիրակի կլիմայական գոտում, Ախուրյան գետի վերին հոսանքներում, բարեխառն լեռնատափաստանային և չափավոր ցամաքային կլիմայով, որին բնորոշ են տաք ու չորային ամառները և սառնամանիքային ու ցրտհարավտանգ ձմեռները, տևական, ցուրտ, հաստատուն ձնածածկույթով:

Լինում են ուժեղ քամիներ, հաճախակի են ձնաբքերը և սառնամանիքները: Տարեկան միջին ջերմաստիճանը $6,5^{\circ}\text{C}$ է: Հուլիսի միջին ջերմաստիճանը հասնում է $+18^{\circ}\text{C}$ -ից $+22^{\circ}\text{C}$, առավելագույն ջերմաստիճանը մինչև $+37^{\circ}\text{C}$, իսկ ձմեռները չափավոր ցուրտ են, հունվարի միջին ջերմաստիճանը -8 -ից -14°C է, նվազագույն ջերմաստիճանը՝ մինչև -35°C :

Առաջին աշնանային ցրտահարությունները սկսվում են հոկտեմբերի առաջին և երկրորդ տասնօրյակների միջակայքում, իսկ ուշ գարնանային ցրտահարությունների վտանգը առկա է մինչև մայիսի երկրորդ տասնօրյակի սկիզբը:

Մթնոլորտային տեղումների տարեկան միջին քանակը տատանվում է 500-600 մմ-ի սահմաններում, որից 350-400 մմ-ը՝ անձրևի, իսկ 150-200 մմ-ը՝ ձյան տեսքով: Տեղումները հիմնականում լինում են ձմռանը և գարնանը՝ վեգետացիայի սկզբնական շրջանում: Վեգետացիայի ինտենսիվ շրջանում՝ սկսած հունիս ամսվա երկրորդ կեսից տեղումների քանակը աստիճանաբար նվազում է և սկսվում է համեմատաբար չորային շրջանը (խստ չորային ժամանակաշրջանը միջին հաշվով տևում է հուլիսի 5-ից մինչև հոկտեմբերի 6-ը՝ մոտ 94 օր): Այդ շրջանում սկսում են փչել խորշակ (չոր) քամիները, որոնց տարեկան առավելագույն տևողությունը կազմում է 40-50 օր և հիմնական մասը բաժին է ընկնում հուլիս, օգոստոս և սեպտեմբեր ամիսներին:

Համայնքի հիմնական բնական լանդշաֆտները սևահողային լեռնատափաստաններ են: Աճում են տարատեսակ խոտաբույսեր, տարածված են տարբեր կենդանիներ՝

դաշտամուկ, ճագարամուկ, կույր մուկ, գայլ, աղվես, ոզնի, լոբ, կաքավ, ճնճղուկ, բագե, ուրուր, սարյակ, աքիս և այլ կենդանիներ ու թռչուններ:

Համայնքի բնական ռեսուրսներն ու տնտեսությունը

Համայնքի զարգացման և տնտեսական արդյունավետության ապահովման համար առանցքային դեր ունեն բնական ռեսուրսները, մասնավորապես ջրերը, բնական լանդշաֆտներն ու կերահանդակները, վարելահողերը, անտառներն ու հանքավայրերը: Վարելահողերի և բնական կերհանդակների կառավարելի և համաչափ շահագործման պայմաններում բավարար նախապայմաններ են ստեղծվում անասնաբուծության և բուսաբուծության զարգացման, անասունների մթերատվության և մշակաբույսերի բերքատվության ավելացման համար:

Բնական ռեսուրսների խելամիտ և կառավարելի օգտագործումը նպաստում է շրջակա միջավայրի և դրանում ձևավորված կենսաբանական համակեցությունների պահպանությանն ու բարելավմանը:

Ջրային ռեսուրսներ

Բասեն համայնքը բավականին հարուստ է ջրային ռեսուրսներով, որոնք պիտանի են խմելու և ոռոգման համար:

Բասեն համայնքի ստորգետնյա բարձրորակ քաղցրահամ աղբյուրները կենցաղային օգտագործվում են ջրամատակարարման նպատակով:

Ստորերկրյա աղբյուրների ջուրն օգտագործվում է նաև տնամերձերի ոռոգման նպատակով, սակայն դրա որակը չի բավարարում ոռոգման ջրերին ներկայացվող պահանջներին և երկարաժամկետ ոռոգման դեպքում հողային ռեսուրսներին սպառնում է դեգրադացիա՝ մասնավորապես, աղակալում նատրիումական աղերով:

Համայնքի վարչական տարածքում է գտնվում Կառնուտի ջրամբարը (21.8 մլն. մ³ օգտակար ծավալով), որի ջուրը նախկինում օգտագործվել է ոռոգման նպատակով: Այսօր այն չի օգտագործվում, քանի որ պահանջվում է էներգիայի ծախս, այն դեպի տնամերձեր մղելու համար:



Նկար 3. Կառնուտի ջրամբարը

Հողային ռեսուրսներ

Բասեն համայնքի հողատարածքները ըստ գոտիականության ներառված են տափաստանային բնահողային գոտու հողերի շարքում: Համայնքի հողերը դասվում են լեռնային սևահողերի տիպին և հիմնականում հանդես են գալիս որպես թույլ և միջին կրազերծված սևահողեր: Սևահողերը օժտված են թույլ և միջին հումուսայնությամբ: Համայնքի հողերը, հիմնականում անջրդի լինելու շնորհիվ, ավելի թույլ են էրոզացված և հումուսի քանակությունը հողերում ավելի լավ է պահպանված:

Բասեն համայնքն ունի հողերի կառավարման պլան, որը կարևոր գործիք է համայնքում արդյունավետ երկրագործություն կազմակերպելու համար:

Գյուղատնտեսություն

Համայնքի զարգացման հիմնական ուղղությունները անասնապահությունն ու բուսաբուծությունն են:

Անասնապահության ճյուղերից զարգացած է և առաջնային տեղ է գրավում մսակաթնային տավարաբուծությունն ու ոչխարաբուծությունը:

Տարվա տաք ժամանակ անասնապահությունը համայնքում վարվում է արոտային ազատ արածեցման եղանակով: Համայնքի հեռագնա արոտները ոչ բավարար են օգտագործվում, գիշերակացի հարմարությունների բացակայության և կաթի մթերման առանձնահատկություններից ելնելով:

Բուսաբուծության ճյուղերից զարգացած են դաշտավարությունը՝ հացահատիկային մշակաբույսերի և բազմամյա խոտաբույսերի մշակությունը: Տնամերձերում բանջարաբուստանային մշակաբույսերից աճեցվում են՝ կարտոֆիլ, գազար, կաղամբ և ճակնդեղ: Դաշտավարական մշակությունը հիմնականում վարվում է անջրդի պայմաններում և կենտրոնացված է սեփականաշնորհված վարելահողերի վրա, իսկ կարտոֆիլի մշակությունը վարվում է ջրովի և կենտրոնացած է տնամերձ հողատարածքներում: Գյուղատնտեսական հողերը համայնքում կազմում են 3935.45 հա, իսկ տնամերձ հողատարածքները՝ 91.47 հա:

Ստորև ներկայացված է համայնքի գյուղատնտեսական հողերի բաշխվածությունն ըստ դրանց գործառնական նշանակության:

Աղյուսակ 1. Բասեն համայնքի գյուղատնտեսության նշանակության և տնամերձ հողատեսքերը

Հողատեսքի գործառնական նշանակությունը	Ընդամենը /հա/	Սեփականության սուբյեկտը		
		ՀՀ քաղաքացիներ /հա/	Համայնք /հա/	Պետություն /հա/
Վարելահողեր	1757,01	1440,19	186,66	130,16
Խոտհարքներ	81,77	-	-	81,77
Արոտավայրեր	1875,05	-	1195,46	679,59
Այլ հողատեսքեր	221,62	-	214,08	7,54
Տնամերձեր	91,47	91,15	0,32	-

Ներկայումս մշակվող հիմնական արոտադրական մշակաբույսերն են աշնանացան ցորենը, գարնանացան գարին, բազմամյա բակլազգի խոտաբույսերը և կարտոֆիլը: Մնացած բանջարաբուստանային մշակաբույսերը մշակվում են հիմնականում ընտանիքների ներքին

կարիքները բավարարելու նպատակով:

Համայնքի ցանքատարածքներում ոչ բավարար, սակայն բավականին տեղ է հատկացված բազմամյա կերային խոտաբույսերին՝ առվույտին և կորնզանին:

Հիմնական ենթակառուցվածքներ

Բասեն համայնքի կողմից կառավարվող հիմնական ենթակառուցվածքներն են խմելու ջրամատակարարման համակարգը, ներհամայնքային և դաշտային ճանապարհները, լուսավորության համակարգը, աղբահանությունը:

Խմելու ջրամատակարարման արտաքին համակարգը բաղկացած է 5 կապտաժներից և մոտ 11 կմ երկարությամբ ջրատարից, որի 7 կմ-ը կառուցված է ասբեստյա խողովակներից: 12 կմ երկարությամբ ներքին ցանցից վերանորոգված է 3կմ-ը: Ունի օրվա կարգավորիչ ջրամբար՝ 500 մ³ ծավալով: Խմելու ջուրը չի վարակազերծվում:

Խմելու ջրի վճար համայնքում չի գանձվում, սպասարկումը կատարվում է համայնքային միջոցների հաշվին:

Համայնքը չունի կեղտաջրերի հեռացման կենտրոնացված համակարգ, տնտեսություններում օգտագործվում են բակային զուգարաններ:

Դեռևս խորհրդային տարիներին բետոնյա տաշտակներով կառուցված ոռոգման ցանցը հիմնականում քայքայված է: Այսօր ոռոգում իրականացվում է միայն տնամերձ հողամասերում՝ խմելու ջրով:

Ներհամայնքային ճանապարհների ցանցը 8-10 կմ է, հիմնականում հողաշեն, մոտ 5 կմ-ը խճապատված է: Դաշտային ճանապարհների ցանցը կազմում է մոտ 50-60 կմ, որոնք հիմնականում անմխիթար վիճակում են:

Լուսավորության ցանցը մոտ 4 կմ է, կետերի ընդհանուր քանակը՝ 70: Մեծամասամբ տեղադրված են էներգախնայող LED լամպեր:

Համայնքում կենտրոնացված աղբահանություն չի իրականացվում, չնայած ունի աղբի տեղադրման համար հատկացված վայր: Մի քանի տեղերում տեղադրված են աղբամաններ: Ամիսը երկու անգամ իրականացվում է համայնքի կենտրոնական փողոցի և դրա հարակից տարածքների մաքրման աշխատանքներ:

Բնակչության առողջական վիճակը

Բնակչության առողջության վրա կլիմայի ազդեցությունը պայմանավորված է մի կողմից անոմալ բարձր և ցածր ջերմաստիճանային օրերի, օդի երկարատև չորության, ջրհեղեղների, փոթորիկների դեպքերի ավելացմամբ, մյուս կողմից՝ էկոլոգիական և սոցիալ տնտեսական փոփոխություններով:

Բասենում հանրության առողջական վիճակը բավականին հուսադրող է, չնայած որ կլիմայական առանձնահատկություններից ելնելով եղանակային պայմանները բավականին փոփոխական են և առողջության պահպանման համար ոչ այդքան նպաստավոր:

2. Կլիմայական փոփոխությունների տենդենցները

Համայնքային մակարդակով կլիմայի փոփոխության տենդենցների գնահատումը հիմնված է սոցիալական հարցումների, համայնքի ղեկավարի, ավագանու, ոլորտի պատասխանատու մասնագետների դիտարկումների ու կարծիքների հիման վրա, քանի որ համայնքում չկան համապատասխան դիտակետեր՝ ջերմաստիճանի և տեղումների վերաբերյալ երկարաժամկետ տվյալներ ունենալու համար:

Բասեն համայնքը գտնվում է չափավոր ցամաքային կլիմա ունեցող տարածաշրջանում, որտեղ կլիմայական համակարգը ձևավորվում է ուղղահայաց գոտիականությամբ և նույնիսկ կլիմայի չնչին փոփոխությունները առաջացնում են զգալի փոփոխություններ էկոհամակարգերում:

Սոցիալական հարցումների արդյունքում, ըստ բնակիչների, համայնքում վերջին 10 տարիների ընթացքում տեղի են ունեցել ջերմաստիճանի բարձրացում և անկանոն փոփոխություններ: Ջերմաստիճանի փոփոխությունների հետ կապված ուժգնացել են տարերային աղետները, որոնք արտահայտվում են երաշտների ու խիստ ցրտահարությունների տեսքով: Արդյունքում համայնքում նկատվում է բերքատվության նվազում:

Բնակիչները նկատել են նաև տեղումների հետ կապված փոփոխություններ՝ հիմնականում տեղումների քանակի նվազում և անկանոն փոփոխություններ: Հորդառատ անձրևները ավելի հաճախակիացել են, մեծացել է բնական աղետների՝ հիմնականում սելավներ, ուժեղ քամիներ, կարկուտ, հաճախությունը:

Ըստ փորձագիտական վերլուծության, կլիմայական փոփոխությունների հետևանքով Բասեն համայնքում հաճախակի են դարձել գյուղատնտեսության ոլորտի համար անցանկալի այնպիսի երևույթները, ինչպիսիք են՝ վաղ աշնանային և ուշ գարնանային ցրտահարությունները, կարկտահարությունները, երկարատև հորդառատ անձրևները, վարարումներն ու սելավները, երկարատև երաշտները, սաստիկ շոգերն ու բնական կերահանդակների արտակարգ հրդեհավտանգությունը, սառնամանիքների սաստկացումը, ուժեղ ձյունը, բուքը, մերկասառույցն ու մառախուղները, ինչպես նաև ուժեղ քամիներն ու պտտահողմերը:

Աղյուսակ 2-ում բերված է Բասեն համայնքի բնության օրացույցը՝ ըստ տարվա ամիսների, կլիմայի անցանկալի դրսևորումներով: Այն ցույց է տալիս վերջին 10 տարիներին բնական երևույթների ժամանակային փոփոխությունը՝ կապված կլիմայական փոփոխությունների հետ:

3. Բասեն համայնքում կլիմայական փոփոխությունների նկատմամբ խոցելիության գնահատում

Բասեն համայնքում կլիմայական փոփոխությունների նկատմամբ խոցելիության նախնական գնահատումը կատարվել է երեք հիմնական ուղղությամբ՝

- բնական էկոհամակարգեր, այդ թվում ջրային ու ցամաքային,
- գյուղատնտեսություն և համայնքային ենթակառուցվածքներ,
- բնակչության առողջություն:

Բնական էկոհամակարգեր

Համայնքի գյուղատնտեսական հողատարածքների մեծ մասը կազմում են բնական կերհանդակները, որոնք միաժամանակ նաև արժեքավոր էկոհամակարգեր են՝ իրենց ուրույն կենսաբազմազանությամբ և բուսատեսակների և կենդանատեսակների պահպանության և վերարտադրության գործում կարևորագույն դերով:

Ըստ էության կերհանդակները հանդիսանում են բավականին փխրուն և խոցելի էկոհամակարգեր: Առավել խոցելի են լեռնային գոտիներում գտնվող կերհանդակները, որոնք տեղադրված են լեռնային թեք ռելիեֆի պայմաններում:

Կերհանդակներում հանդիպող առավել վտանգավոր բնապահպանական և կլիմայական ազդեցություններն են հողերի դեգրադացիան ու անապատացումը, ճանապարհային էրոզիան, վաղ գարնանային և ուշ աշնանային արածեցումները, բուսականության կազմի փոփոխությունը և դրանցում ոչ ուտելի, փշոտ ու թփուտային բույսերի քանակի ավելացումը, կենսաբազմազանության նվազումն ու խոցելի տեսակների ոչնչացումը, կարճ ժամանակահատվածում տեղումների մեծ քանակությունն ու ինտենսիվությունը, երկարատև երաշտները, հրդեհները և այլն:

Կերհանդակների սխալ կառավարումը ևս կլիմայական փոփոխությունների ներկա պայմաններում զգալի բացասական ազդեցություն է թողնում արտաավայրերի և խոտհարքների վիճակի և դրանց օգտագործման տնտեսական արդյունավետության վրա:

Կլիմայական փոփոխությունների նկատմամբ բնական ամենազգայուն ու առավել **խոցելի բաղադրիչը ջրային ռեսուրսներն** են, որոնք Հայաստանում վերջին տասնամյակի ընթացքում բավականին փոփոխությունների են ենթարկվել:

Բասեն համայնքը բավականին հարուստ է ջրային ռեսուրսներով: Սակայն քանի որ ներկայումս բնակիչները չեն վճարում սպառած ջրի դիմաց, ջրային պաշարներն օգտագործվում են ոչ խնայողաբար և անարդյունավետ: Ռոտզման ջրի բացակայության պայմաններում տնամերձերում ոռոգումն իրականացնում է խմելու ջրով: Բնակչության շրջանում ձևավորված չէ պատասխանատվություն ջրային ռեսուրսների ճիշտ կառավարման և խելամիտ օգտագործման համար:

Գյուղի վարչական տարածքում՝ գյուղից բավականին ցածր նիշում գտնվում է 21.8մլն. մ³ օգտակար ծավալով Կառնուտի ջրամբարը, որի ջուրը սակայն չի օգտագործվում ոռոգման նպատակով, պոմպակայանի բացակայության արդյունքում:

Բասենում առկա է նաև **հողային ռեսուրսների** դեգրադացիայի խնդիր՝ վարելահողե-

րի հողմնահարում, թեք լանջերի հողաշերտի լվացում և ջրատարում, արոտավայրերի հովտային հատվածների գերխոնավացում, կենդանիների և գյուղատնտեսական տեխնիկայի անկանոն տեղաշարժեր, գյուղամերձ արոտների գերարածեցում, հեռավոր արոտների կերային հնարավորությունների ոչ լիարժեք օգտագործում, արոտների հրդեհներ և այլն:

Համայնքային կերահանդակների զգալի մասը արդյունավետ չի օգտագործվում քարքարոտության և ոչ ուտելի բուսականությամբ (փշեր, գազեր և այլն) ծածկված լինելու, իսկ մի մասն էլ աղբյուրների ակունքների խցանման, ջրահոսքի խաթարման և ճահճուտների առաջացման պատճառով: Օրինակ Բասեն համայնքի Մատներ սարի ստորոտի աղբյուրների ակունքների խցանման հետևանքով մոտավորապես 4 հա կերահանդակ ճահճացել է և դարձել է անօգտագործելի:



Նկար 4. Ճահճացած տարածք Բասեն համայնքի Մատներ սարի ստորոտում

Համայնքի տարածքում աշնանացան ցորենի ծղոտը ոչ պիտանի անասնակեր լինելու պատճառով, հիմնականում այրում են դաշտերում, ինչը հանգեց նույն է մեծ քանակությամբ ջերմոցային գազերի արտազատմանը և բերում է հողի վերին շերտի կենսաբազմազանության ոչնչացման:

Միևնույն ժամանակ համայնքի բնակչության մոտ 90%-ը որպես վառելանյութ օգտագործում է աթարը (չորացված գոմաղբ), ինչը հնարավորություն չի տալիս գոմաղբը օգտագործել որպես պարարտանյութ:

Գյուղատնտեսություն և համայնքային ենթակառուցվածքներ

Կլիմայական պայմանների վերլուծությունը ցույց է տալիս, որ Բասեն համայնքում երկրագործության վարումը անջրդի պայմաններում բավականին ռիսկային է, ինչը հիմնականում պայմանավորված է տեղումների քանակի սակավությամբ, սեզոնային անհավասարաչափ բաշխվածությամբ, ինչպես նաև տարածաշրջանին բնորոշ գոլորշիացման բարձր դեֆիցիտով:

Հողօգտագործողների մեծ մասը այսօր կիրառում է հողերի մշակության կրկնվող, անհերթափոխ և/կամ միամշակաբուսային եղանակը և շատ հազվադեպ են կիրառվում երկդաշտյա կամ եռադաշտյա ցանքաշրջանառությունները: Հողերի նման անկանոն շահագործումը, ոռոգման և պարարտացման թերի կիրառումն ու կլիմայական փոփոխությունները հանգեցրել են նրան, որ հողերը վերջին երկու տասնամյակի ընթացքում կորցրել են իրենց որակական հատկանիշները և կանգնել են դեգրադացման ռիսկի առաջ:

Կլիմայական փոփոխությունների պայմաններում անասնապահության համար ռիսկերը նույնպես ավելանում են: Ամառային բարձր ջերմաստիճանի, երկարատև երաշտների ու արոտավայրերում բուսածածկույթի չորության պատճառով նպաստավոր պայմաններ են ստեղծվում վիրուսային և բակտերիալ հիվանդությունների՝ դաբաղ, սիբիրախտ, խշխշան պալար և այլն, տարածման համար:

Բասենի համայնքային ենթակառուցվածքները, հատկապես խմելու ջրամատակարարման արտաքին ու ներքին ցանցերը և ներհամայնքային ու դաշտային ճանապահները բավականին խոցելի են կլիմայական փոփոխությունների նկատմամբ: Վերջիններս չունեն անջրնաջրերի ու հեղեղաջրերի հեռացման համարգ և հատկապես առատ տեղումներից հետո հոսքաջրերը քայքայում են համայնքի ճանապարհային ցանցը:

Հողամշակության խոցելիությունը և կլիմայակախվածությունը համայնքում շատ բարձր է, քանի որ գյուղատնտեսական հողատարածքները հիմնականում անջրդի են, իսկ ոռոգման ցանցը գրեթե ամբողջությամբ քայքայված լինելու արդյունքում տնամերձ հողատարածքները ոռոգվում են խմելու ջրով:


Համայնքի համար բավականին մեծ խոցելիություն է համարվում նաև կոշտ կենցաղային թափոնների կառավարման համակարգի բացակայությունը: Թափոնների հիմնական մասը ձմեռային ամիսներին այրվում է բնակիչների վառարաններում և անկառավարելիորեն աղտոտում համայնքի օդային ավազանը, հողային և ջրային ռեսուրսները:

Բնակչության առողջություն

Բասեն համայնքի բնակչության առողջական վիճակի խոցելիությունը կլիմայական փոփոխությունների ազդեցության նկատմամբ շատ դժվար է գնահատել, քանի որ դրա վերաբերյալ չկան երկարամյա վիճակագրական տվյալներ:

Փորձագիտական գնահատման համաձայն կլիմայական գործոնների արդյունքում համայնքի բնակչության մոտ նկատվում է սիրտանոթային համակարգի տարաբնույթ հիվանդությունների և ալերգիկ բնույթի դրսևորումների աճ:

Ստորև՝ նկար 5-ում բերված է Բասեն համայնքի կլիմայական խոցելիության քարտեզը:



Նկար 5. Բասեն համայնքի կլիմայական խոցելիության քարտեզ

4. Բասեն համայնքում կլիմայական փոփոխությունների հարմարվողականության գործողությունների պլան

Բասեն համայնքի համար առավել կարևոր և արդիական է կլիմայի կանխատեսվող փոփոխություններին հարմարվելը և հարմարվողականության արդյունավետ գործողություններ պլանավորելն ու իրականացնելը:

Համայնքային մակարդակում կլիմայի փոփոխության հարմարվողականությունը դինամիկ գործընթաց է, որը ենթադրում է կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ այնպիսի գործողությունների պլանավորում և իրականացում, որոնք հնարավորություն կտան որոշակի ժամանակային սահմաններում նվազեցնել համայնքի խոցելիությունը ԿՓ անբարենպաստ գործոնների ու ծայրահեղ դրսևորումների նկատմամբ և հնարավորություններ կստեղծեն համայնքային առաջընթաց զարգացման համար:

Կլիմայի փոփոխության հարմարվողականության ռազմավարությունն այսօր աշխարհում որդեգրել է նոր մոտեցում, որն անվանում են «Էկոհամակարգի վրա հիմնված հարմարվողականություն»: Այն ուղղված է էկոհամակարգերի կառավարման բարելավմանը հանուն հանրային օգուտների ավելացման և բնական պահանջների բավարարման: Բնական էկոհամակարգերից ստացվող օգուտների հանրագումարը ընդունված է անվանել էկոհամակարգային ծառայություններ:

Կլիմայի փոփոխության հարմարվողականության այս պլանն ուղղակիորեն հիմնված է Բասեն համայնքի համար նախկինում մշակված մի քանի փաստաթղթերում տեղ գտած առաջնահերթությունների և սովյալների վրա, ինչպիսիք են՝

- Բասեն համայնքի 2016-2020թթ. սոցիալ-տնտեսական զարգացման քառամյա ծրագիրը,
- Բասեն համայնքի արտոնների կառավարման պլանը,
- Բասեն համայնքի հողերի և ջրերի կառավարման համապարփակ գործելակերպի ներդրման վերլուծական հաշվետվությունը:

Որպես Բասեն համայնքի ԿՓ հարմարվողականության ռազմավարական առաջնահերթություններ են սահմանվել ետևյալ գործողությունները:

– Համայնքային մակարդակում շարունակել ուսումնասիրել ԿՓ բացասական երևույթները, ազդեցություններն ու ծայրահեղ դրսևորումները և վարել դրանց համայնքային գրանցամատյան:

– Գնահատել համայնքի ԿՓ խոցելիությունը տարբեր բնագավառներում և կազմել հարմարվողականության գործողությունների կարճաժամկետ և երկարաժամկետ պլաններ:

– Ձևավորել այնպիսի ֆինանսատնտեսական մեխանիզմներ, որոնք հնարավորություն կտան առավել անկախ և արդյունավետ պլանավորել ու իրականացնել ԿՓ հարմարվողականության գործողություններ ինչպես անհատական, այնպես էլ խմբային և համայնքային մակարդակներում (համայնքային զարգացման հիմնադրամ, քաղաքացիական շրջանառու հիմնադրամ և այլն):

– Կատարելագործել համայնքային մակարդակում կլիմայական երևույթների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման և տարածման մեխանիզմներն ու գործիքները, որոնք հնարավորություն կտան իրականացնել ԿՓ գործընթացների մոնիտորինգ, ինչպես նաև խոցելիության ու ռիսկերի ավելի արդյունավետ գնահատում:

– Բարձրացնել համայնքի բնակչության իրազեկության մակարդակը ԿՓ, մասնավորապես համայնքային մակարդակում ԿՓ հարմարվողականության և մեղմման գործողությունների ուղղությամբ և խթանել նրանց մասնակցությունը այդ գործընթացներին:

– Ակտիվացնել համագործակցությունը պետական մարմինների, տեղական ու միջազգային հասարակական կառույցների հետ, համայնքում ԿՓ հարմարվողականության գործողությունների պլանի իրականացմանն ուղղված միջոցներ հայթայթելու և զարգացման ծրագրեր իրականացնելու նպատակով:

Բասեն համայնքի համար ԿՓՀԳՊ-ը բերված է ստորև, աղյուսակ 3-ում:

Աղյուսակ 4-ում բերված է ԿՓՀԳՊ-ի շրջանակներում ընտրված առաջնահերթ գործողությունների պլանը, որը նախատեսվում է ընդգրկել համայնքի զարգացման քառամյա պլանում:

Աղյուսակ 3. ԿՓՀԳՊ ՀՀ Շիրակի մարզի Բասեն համայնքի համար

Կլիմայի փոփոխությունների ազդեցության ոլորտը	Գործողությունները
<p>1. Գյուղատնտեսություն</p>	<ul style="list-style-type: none"> • Երաշտադիմացկուն և չորադիմացկուն բուսատեսակների և հիբրիդների ներդրում: • Վտանգավոր օդերևութաբանական պայմանների նկատմամբ վաղ ահազանգման, պաշտպանության և ապահովագրության համակարգերի ձևավորում համայնքային մակարդակում: • Տեղական ավանդական բուսա և կենդանատեսակների պահպանում և տարածում, բարձր լեռնային արոտավայրերի առավել խնայողական օգտագործում և տեսակարար բեռնվածության կրճատում: • Հողագործության գոտու տեղաշարժ դեպի համայնքի բավարար խոնավությամբ ապահովված տարածքներ: • Ջրախնայողական ոռոգման տեխնոլոգիաների կիրառում, գյուղատնտեսական կենդանիների և մշակաբույսերի հիվանդությունների ու վնասատուների նկատմամբ կայուն տեսակների ներդրում և կանխարգելման միջոցառումների իրականացում: • Հակահեղեղային միջոցառումների իրականացում:
<p>2. Ենթակառուցվածքներ</p>	<ul style="list-style-type: none"> • Ջրամատակարարման համակարգերի (կապտած, ջրատար, ՕԿՁ, բաշխիչ ցանց, քլորակայան և այլն) վերակառուցում կամ նախագծում, կառուցում: • Ջրամատակարարման ցանցի կառուցում: • Ջրահեռացման ցանցի նախագծում և կառուցում: • Ոռոգման ցանցի նախագծում և կառուցում: • Ներհամայնքային և դաշտային ճանապարհների վերակառուցում: • Աղբահանության կազմակերպում և իրականացում: • Կառնուտի ջրամբարի տեխնիկական վերազինում:

<p>3. Էկոհամակարգեր</p>	<ul style="list-style-type: none"> • Բնական կերհանդակների պահպանություն և վերականգնում կերհանդակների ճիշտ կառավարում: • Խոտհարքների և արոտավայրերի կանոնակարգված օգտագործում: • Հողերի դեգրադացիայի կանխում, հողերի պահպանություն: • Անապատացումը կանխելու միջոցառումների ծրագրի կիրառում: • Կենսաբազմազանության պահպանության միջոցառումների կիրառում: • Անասունների արածեցման ժամկետների պահպանում: • Անտառային չորադիմացկուն ծառատեսակների տեղայնացում: • Անտառային խոցելի տարածքներում փորձնական ծրագրերի իրականացում (օրինակ՝ չորադիմացկուն ծառատեսակների տնկում, անտառների վերականգնում, հողմաբեկ պատնեշների վերականգնում, տնկարաններ, մետաղալար ցանկապատների տեղակայում և այլն): • Անտառների մակերեսի մեծացում, մասնավոր անտառների ստեղծման խթանում: • Անտառային վնասատուների և հիվանդությունների դեմ միջոցառումների իրականացում: • Հակասելավային միջոցառումների իրականացում: • Սելավատարների կայուն կառավարում: • Բնական կերհանդակների ճիշտ կառավարում:
<p>4. Բնական աղետների ռիսկայնություն</p>	<ul style="list-style-type: none"> • ԱՌՆ հարցերի վերաբերյալ համայնքի բնակիչների համար դասընթացների կազմակերպում: • Աղետների ռիսկների նվազման (ԱՌՆ)/աղետների ռիսկերի կառավարման (ԱՌԿ) վերաբերյալ տեղեկատվական նյութերի տարածում (բրոշյուրներ, դասագրքեր, ձեռնարկներ): • Սողանքավտանգ լանջերի հատվածները կայունացնելու կենսաինժեներական միջոցառումների իրականացում: • Ցեխի հոսքերի մաքրում կիրճերում, ջրահեռացման համակարգերի կառուցում: • Հակակարկտային կայանների կառուցում, հակակարկտային ցանցի կառուցներ: • Վայրի հրդեհների վերացման նախագծեր, հատուկ հագուստի, սարքավորումների ձեռք բերում:

<p>5. Ջրային և հողային ջեւուրսներ</p>	<ul style="list-style-type: none"> • Բարձրացնել բնակչության իրազեկւոյթյան մակարդակը կլիմայի փոփոխւոյթյան հնարավոր բացասական ազդեցւոյթւոյնների, հողերի և ջրերի ճիշտ կառավարման, տարբեր մշակաբույսերի մշակւոյթյան տեխնոլոգիաների և բույսերի պաշտպանւոյթյան միջոցների վերաբերյալ: • Ջրի խնայողական օգտագործման նպատակով կիրառել բույսերի մշակւոյթյան և ոռոգման նոր տեխնոլոգիաներ: • Համայնքում վերականգնել ցանքաշրջանաւորւոյթւոյնների կիրառման համակարգը: • Իրականացնել հողերի բարելավման և օրգանական պարարտանյութերով հարստացման գործողւոյթւոյններ, հաշվի առնելով հողերի առկա վիճակն ու մշակաբույսերի պահանջարկը սննդանյութերի նկատմամբ, ինչպես նաև պարարտանյութերի կիրառման տեխնոլոգիական առանձնահատկւոյթւոյնները:
<p>6. Հանրային առողջւոյթւոյն</p>	<ul style="list-style-type: none"> • Եղանակային պայմաններից կախված հիվանդացւոյթյան վերաբերյալ բնակչւոյթյան իրազեկւոյթյան բարձրացման միջոցառումներ: • Շենքերում և բնակարաններում ջերմասիճանային բարենպաստ պայմանների ստեղծում, մասնավորապես ջերմամեկուսացման և օդորակման միջոցով: • Ջերմային ալիքների առաջացմանը հարմարվելու նպատակով այդ պայմանների համար հատուկ ուսումնասաշխատանքային ռեժիմի ներդնում: • Ապագայի կլիմայական պայմաններին համապատասխան ճարտարապետաշինարարական նորմերի ու ստանդարտների կիրառում: • Ջրամատակարարման ու մաքուր ջրի մատչելիւոյթյան ապահովում: • Անհատական պաշտպանիչ միջոցների (հագուստ, գլխարկ, ակնոցներ) կիրառում հատկապես դաշտային, բացօդյա աշխատանքների ժամանակ: • Մշտատն սանիտարահիգիենիկ ու էպիդեմիոլոգիական մոնիտորինգի ու համապատասխան կանխարգելիչ միջոցառումների, այդ թվում բնակչւոյթյան իմունիզացիայի ներդրում:

Աղյուսակ 4. ԿՓՀԳՊ-ի առաջնահերթ միջոցառումները Շիրակի մարզի Բասեն համայնքի համար

ԿՓՀ-ի գործողությունների ազդեցության ոլորտը և ԳՊ առաջնային միջոցառումները	Առաջարկվող միջոցառման գործողությունները	Հիմնախնդիրը	Նպատակը
1	2	3	4
<p>1. Հանրային առողջություն</p> <p><i>1. 1.Իրականացնել խմելու ջրի վարակազերծում</i></p>	<ul style="list-style-type: none"> Կառուցել քլորակայան, Ուսուցանել շահագործող անձնակազմին 	<p>Կլիմայական փոփոխությունների հետ կապված (երկարատև շոգեր, խմելու ջրի քանակի սեզոնային անբավարարություն) համայնքում վերջին տարիներին հաճախակի են դարձել ջրով տարածվող հիվանդությունների բռնկումները՝ կապված վարակազերծման բացակայության հետ:</p> <p>ՀՀ ԱՆ առողջապահական պետական տեսչության Շիրակի մարզային կենտրոնի կողմից ջրամատակարարման համակարգից նմուշառված խմելու ջրի հետազոտությունների արդյունքները ցույց են տվել, որ կան շեղումներ «ԽՄԵԼՈՒ ՋՈՒՐ: ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԱՑՎԱԾ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՋՐԻ ՈՐԱԿԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԻԳԻԵՆԻԿ ՊԱՀԱՆՁՆԵՐ: ՈՐԱԿԻ ՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆ» N 2-III-Ա 2-1 սանիտարական նորմերից: Կից ներկայացվում են ՀՀ ԱՆ-ի տարբեր կառույցների կողմից վերջին ամիսներին համայնքին ներկայացրած գրությունները (<i>Հավելված 2</i>):</p>	<p>Տվյալ գործողության նպատակն է՝ Բասեն համայնքի խմելու ջրի քլորացման միջոցով նվազեցնել բնակչության առողջապահական ռիսկերը և տարբեր ախտածին մանրէներով ախտահարվելու վտանգը:</p>

1	2	3	4
<p>1.2. Վերակառուցել գյուղի ջրատարի առավել ռիսկային և հեղեղավտանգ հատվածը</p>	<ul style="list-style-type: none"> • Վերակառուցել ձորակի վրայով անցնող խողովակաշարը: 	<p>Բասեն համայնքի խմելու ջրագծի մոտ 240 մետր հատվածը (<i>Հավելված 3</i>) անցնում է ձորակով, որը միաժամանակ իրենից ներկայացնում է նաև հեղեղատար: Վերջին տարիներին կլիմայական փոփոխությունների հետ կապված գարնանային ու աշնանային հեղեղների ուժգնացման պարագայում խմելու ջրի խողովակի այս անցումային հատվածը խիստ վտանգված է:</p>	<p>Նպատակն է համայնքի բնակչությանն ապահովել անվտանգ և կայուն ջրամատակարարմամբ:</p>
<p>2. Գյուղատնտեսություն</p> <p>2.1. Բուսաբուծության կլիմայակայուն ուսումնացուցադրական տեղամասի ստեղծում</p> <p>2.1.1. Ոռոգման կաթիլային համակարգի ներդրում</p> <p>2.1.2. Հակակարկտային պաշտպանության իրականացում</p>	<ul style="list-style-type: none"> • Ելակի արտադրության տեղամասի ստեղծում մինի թունելային ջերմատնային եղանակով և ցանքածածկով: • Կաթիլային ոռոգման համակարգի անցկացում: • Հակակարկտային ցանցի տեղադրում: • Բույսերի մշակության նոր տեխնոլոգիաների վերաբերյալ ուսուցումների կազմակերպում: 	<p>Համայնքը չունի ոռոգման համակարգ, համայնքի տնամերձ հողատարածքները ոռոգվում են խմելու ջրով: Չոր ցամաքային կլիմայի պատճառով ավանդական ոռոգումը ոչ արդյունավետ է գյուղատնտեսության համար բարձր գոլորշունակության պատճառով: Համայնքում վերջին տաս տարում ԿՓ հետևանքով հաճախակի են դարձել կարկուտները և ուժեղ քամիները: Բնական աղետներից տուժել է հատկապես գյուղատնտեսությունը (խոչընդոտում է բարձրարժեք մշակաբույսերի աճեցումը), որը իր հերթիկ բացասական է ազդել բնակչության սոցիալական վիճակի վրա: Համայնքը ունի երկու հակակարկտային կայաններ, որոնք նախ չեն բավարարում համայնքային հողերը կարկուտից պահպանելու համար և երկրորդ ԿՓ մեղմման տեսանկյունից ոչ կիրառելի են (մթնոլորտում արհեստականորեն առաջացնում է, ջերմաստիճանի ավելցուկային բարձրացում):</p>	<p>Նպատակն է ներդնել գյուղատնտեսության վարման նոր տեխնոլոգիաներ, որը հնարավորություն կտա հարմարվել կլիմայական փոփոխությունների մարտահրավերներին:</p>

1	2	3	4
<p>3. Բնապահպանություն</p> <p><i>3.1. Աղբահանության համակարգի ստեղծում և թափոնատեղերի վիճակի բարելավում</i></p>	<ul style="list-style-type: none"> • Համայնքի տարածքում աղբամանների տեղադրման օպտիմալ վայրերի որոշում և քարտեզագրում: • Աղբամանների ձեռքբերում և տեղադրում: • Աղբահանության և աղբի այրման վերաբերյալ իրազեկում: • Թափոնատեղերի բարելավում: 	<p>Աղբահանությունը և թափոնների կառավարման այսօր Հայաստանում համարվում է առաջնահերթ բնապահպանական հիմնախնդիրներից մեկը: Առավել ևս գյուղական համայնքներում, որտեղ պլաստիկ նյութերից կազմված թափոնների հիմնական մասը այրվում է՝ շրջակա միջավայր արտանետելով մեծ քանակությամբ կայուն օրգանական աղտոտիչներ՝ դիօքսիններ և նիտրոֆորաններ, դրանով իսկ նպաստելով կլիմայական փոփոխություններին:</p>	<p>Սույն ծրագրի նպատակն է նվազեցնել ԿՓ-ը նպաստող արտանետումները, համայնքում ձևավորելով թափոնների կառավարման համակարգ և բարձրացնել բնակչության իրազեկության և գիտելիքների մակարդակը՝ թափոնների այրման վնասակար ազդեցության մասին:</p>
<p>4. Էկոհամակարգերի պաշտպանություն</p> <p><i>4.1. Դաշտապաշտպան անտառաշերտերի ստեղծում համայնքի առավել հողմավտանգ հատվածներում</i></p>	<ul style="list-style-type: none"> • Առավել հողմավտանգ հատվածների որոշում և ռելիեֆի ուսումնասիրություն: • Հողի հարթեցում և ակոսավորում, • տնկիների ձեռքբերում և ծառատունկ: • Տնկիների պաշտպանության և կայունության մեխանիզմների ստեղծում: 	<p>Քամիները էական ազդեցություն ունեն Բասեն համայնքի կլիմայական պայմանների ձևավորման և գյուղատնտեսության վարման վրա: Բավականին ընդարձակ տարածքներ գրեթե չեն մշակվում, քանի որ Վերջին տարիներին ԿԶ-ի արդյունքում մեծացել է քամու ուժգնությունը և ուժեղ քամիները հնարավորություն չեն տալիս դրանցում արդյունավետ կերպով զբաղվել դաշտավարությամբ և բուսաբուծությամբ:</p>	<p>Գործողության նպատակն է ստեղծել հարմարավորականության միջոցառումներ՝ ուժգին քամիներից գյուղատնտեսական հողերի պաշտպանության և արդյունավետ ու եկամտաբեր օգտագործման համար:</p>

5. Եզրակացություններ

Բասեն համայնքն ունի զարգացման և ԿՓ հարմարվողականության կարողություններ և հարմարվողականության անհրաժեշտությունը գիտակցում են թե համայնքի ղեկավարները և թե բնակիչները:

ԿՓ հարմարվողականության գործողությունների պլանի իրականացման համար անհրաժեշտ միջոցների ներգրավումը առաջնային խնդիր է համայնքների համար, որը սակայն հնարավոր է լուծել համայնքային/քաղաքացիական հիմնադրամների ստեղծման և շահագրգիռ կողմերի (դոնոր կազմակերպություններ, գործարարներ, գիտնականներ, փորձագետներ և այլն) ներգրավման միջոցով: Բոլոր շահագրգիռների ներուժը ուղղելով ԿՓ նկատմամբ համայնքի խոցելիության նվազեցմանը, հնարավորություն կստեղծվի կանխելու ԿՓ սպառնալիքները և համայնքի համար ապահովել կայուն զարգացում: